



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՐԲԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ



Սայր Աթոռ Ս. Էջմիածնում, 1955 թվի սեպտեմբերի 29-ին, հանդիսավոր իրադրության մեջ և եկեղեցասիրական, հայ-րենասիրական խանդավառ մթնոլորտում բացվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գերագույն օրենսդիր մարմինը՝ Ազգային-եկեղեցական պատկանելի ժողովը, ընտրելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսին և զբաղվելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար կարելի է նշանակություն ունեցող մի շարք հարցերով, որոնք կապված են մեր եկեղեցու զորացման, կազմակերպման հետագա աշխատանքների հետ:

Ազգային-եկեղեցական համագումարին մասնակցելու համար Ս. Աթոռ էին ժամանել Հայրենի և Սովետական Միության բեմերից, Սփյուռքի բոլոր ծայրերից, Ազգի և եկեղեցու առևտնից ընտրված ազնիվ, հայրենասեր և եկեղեցասեր հոգևորական և աշխարհիկ պատգամավորներ, որոնք սրբությամբ և պատվով կատարեցին իրենց եկեղեցասիրական, հայրենասիրական սրբազան պարտականությունը:

Մեր ազգային-եկեղեցական պատմության մեջ 1955 թվականը կնշվի որպես բացառիկ ու պատմական տարեթիվ, որովհետև 1955 թվի Ազգային-եկեղեցական ժողովը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կյանքում

արտակարգ երևույթ հանդիսացավ իր կոտմիասնականությամբ և համագգային ներկայացուցչությամբ, որին իրենց մասնակցությունը բերել էին բովանդակ հայ ժողովրդի արժանավոր ներկայացուցիչները:

Ազգային-եկեղեցական սրբագումար ժողովի պատմական նշանակությունը կայանում էր նրանում, որ հայրապետական ընտրությանը մասնակցեցին ոչ միայն Մայր Հայրենիքի և Սովետական Միության մեր բեմերը, այլև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մյուս նվիրապետական Աթոռների ներկայացուցիչները, գաղթաշխարհի մեր բոլոր բեմերը:

Ամենայն Հայոց նորընտիր Հայրապետի ընտրությունը վերածվեց հայ ժողովրդի միասնականության և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու արտառույ միության տոնի, հայ ժողովրդի սիրտ և հարգանքի տոնի, իր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և նրա արժանավոր նոր Գահակալի շուրջ, որովհետև Ս. Էջմիածնի առևտն ու խորհուրդը, Մայր Աթոռի հմայքն ու հեղինակությունը նվիրական ու բանկ են ամեն մի հավատացյալ հայրենասեր հայ մարդու համար: Ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց Հայրապետությունը, խտացումն է հայ հոգու, հայ հավատքի, հայրենասիրության և եկեղեցասիրության:

Ավելի քան երբեք սրտապնդիչ, մխիթարական էր տեսնել, որ ընտրության այս պատ-

մական օրերին, պատգամավորների համար չկային և այլապես չէին էլ կարող լինել ավելի բարձր շահեր, քան Հայաստանյայց Առաքելական եկեղեցու, քան մեր փառապանծ Հայրենիքի, քան հայ ժողովրդի միասնական ու գերագույն, նվիրական շահերը:

Ազգային-եկեղեցական ժողովի բացառիկ ու պատմական նշանակությունը կայանում է նաև եկեղեցական-հայրենասիրական միասնականության մեջ, որ նա հանդես բերեց առանց բացառության բնական բոլոր խնդիրներում և ընդունված համապատասխան գործնական որոշումներում, որոնք ըստ ամենայնի արտահայտում էին բոլոր պատգամավորների ցանկությունների, իղձերի, կամքի, գործողությունների միասնականությունը, որպեսզի ազգային կոտ համախմբվածությամբ և փոխըմբռնողությամբ, ոչ միայն վերանա սզի սև շղարշը այրիացյալ Մայր Աթոռից, այլ նաև նոր ու լուսամիտ որոշումներ ընդունվեն Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հետագա զորացման, կենսունակության և պայծառության համար:

Ազգային-եկեղեցական ժողովի ընդունած որոշումների և բանաձևերի մեջ դրսևորվում էր Հայաստանյայց Առաքելական եկեղեցու միասնության և հայ հավատացյալ ժողովրդի կամքի, միասնականության սրբազան սկզբունքները: Ի պատիվ Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորներին պետք է ասել, որ նրանք գտնվեցին իրենց պարտականության, կոչման բարձրության վրա, հանդես բերելով խորը սեր ու նվիրվածություն, երախտագիտություն դեպի մեր Հայրենի հաճախող երկիրը, դեպի մեր ժողովուրդը, դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Ազգային-եկեղեցական ժողովի աշխատանքներին, բացի պատգամավորներից, ներկա էին նաև բազմաթիվ ուստավորներ և հյուրեր ո՛չ միայն Սովետական Հայաստանից, այլ նաև հեռավոր ու մոտիկ հայ գաղութներից, հեռավոր Բուենոս-Այրեսից, Մոնտեվիդեոյից, Հյուսիսային Ամերիկայից, Կալիֆորնիայից և Եվրոպայի մեր գաղութներից, Եգիպտոսից, Պաղեստինից, Լիբանանից, Սիրիայից, Հնդկաստանից, պատգամավորներ և ուստավորներ, որոնք կտրել անցել էին տասնյակ հազարավոր

մղոներ, ծովեր և օվկիանոսներ՝ գալ հասնելու համար Մայր Աթոռ Ս. Էջմիածին ու Հայրենի սրբազան հողը, համբուրելու Ս. Էջմիածնի հազարամյա մեռնաբույր սրբություններն ու փառքը, և ողջագործելու Հայրենիքում ապրող իրենց սիրելիների հետ, հարազատների հետ:

Ազգային-եկեղեցական ժողովը, բացի իր գուտ կրոնա-եկեղեցական նշանակությունից, ունեցավ նաև այլ կարևոր նշանակություն: Գաղթաշխարհի հայրենակարոտ ժողովրդի ներկայացուցիչները, ուստավորներն ու հյուրերը, Ազգային-եկեղեցական ժողովի մեծահարգ պատգամավորները, կաթողիկոսական ընտրության կապակցությամբ հեռավորություն ունեցած համբուրելու Հայրենի սրբազան հողը, մոտիկից ծանոթանալու Հայրենի երկրի նվաճումների և հայ ժողովրդի երջանիկ և խաղաղ կյանքի հետ:

Արդարև, պատգամավորներին Հայրենի երկիր էր բերել եկեղեցասիրության և հայրենասիրության վառ գգացումները:

Կաթողիկոսական այս պատմական ընտրության ժամանակ ավելի քան երբեք հստակ և լավագույն կերպով դրսևորվեց Մայր Հայրենիքի և Ս. Էջմիածնի շուրջ ստեղծված գաղութահայ ժողովրդական լայն գանգվածների համակրության արտահայտությունը և Հայրենիքի շուրջ, Էջմիածնի շուրջ համախմբվելու միասնական կամքն ու արտառույց ցանկությունը:

Ազգային-եկեղեցական ժողովի պատմական նշանակությունը կայանում էր նաև նրանում, որ հսկայական, խանդավառ հետաքրքրություն առաջ բերեց գաղթաշխարհի լայն, հայրենասեր գանգվածների մեջ, ոչ միայն դեպի Ս. Էջմիածինը, այլ նաև դեպի Մայր Հայրենիքը:

Պատգամավորները, ուստավորներն ու հյուրերը, իրենց վերադարձին, իրենց հետ տարան Ս. Էջմիածնի օրհնությունը, նորընտիր Հայրապետի հայրապետական ողջույնը և Մայր Հայրենիքի պատգամը գաղթաշխարհի հայրենակարոտ հայորդիներին:

Հայ ժողովրդի համար միշտ նվիրական է եղել Հայրենիքի պատգամը և Ս. Էջմիածնի օրհնությունը: Տարագիր հայ ժողովրդի հայրենասեր սիրտը բարախել է միշտ Հայրենիքի սիրով և Ս. Էջմիածնի գաղափարով

և խորհրդով, հայ ժողովուրդը ուր էլ որ գտնվել է, ազգային հպարտության ամենա-
ազնիվ զգացումներով է լցված եղել և է
դեպի իր Սովետական Հայրենիքը և Մայր
Արոտ Ս. էջմիածինը:

Դժվար է այս սեղմ տողերի մեջ վեր հանել
Ազգային-եկեղեցական ժողովի պատմական
նշանակությունը: Նա խոշոր դեր խաղաց
Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոր
վերելքի, հայ ժողովրդի հոգևոր զարթոնքի, և
Սփյուռքի բովանդակ հայության Մայր Հայ-
րենիքի շուրջ համախմբելու տեսակետից:

Ազգային-եկեղեցական ժողովի աշխա-
տանքները տեղի են սկսվում 19-ից
մինչև հոկտեմբերի 7-ը: Ժողովը ունեցավ
չորս նիստ:

Համազգային ժողովի առաջնակարգ և
հերթական խնդիրն էր Ամենայն Հայոց Կա-
թողիկոսի ընտրությունը: Ազգային-եկեղե-
ցական ժողովի բացառիկ և արտակարգ լի-
նելու հանգամանքը ավելի քան վառ կերպով
արտահայտվեց հոր Կաթողիկոսի ընտրու-
թյան հարցում: Ազգային-եկեղեցական սըր-
բագումար ժողովը, իր երկրորդ նիստում,
սեպտեմբերի 30-ին, ժամը 5,30-ին Ամենայն
Հայոց Կաթողիկոս ընտրեց Ռուսիայի և
Բուլղարիայի առաջնորդ գերաշնորհ Ս.
Վազգեն եպիսկոպոս Պալեյանին: Այս հան-
գամանքը ինքնին վկայում է այն մեծ վստա-
հության և ժողովրդականության մասին,
որ իրապես վայելում էր հորքերի Կաթողի-
կոսը և՛ պատգամավորական-ուխտավորա-
կան ջրջանակում և՛ ժողովրդի լայն խավե-
րում:

Նորընտիր Հայրապետը մեր ամենաշնոր-
հալի, հավատավոր և տեսլապաշտ հոգևորա-
կաններից մեկն է, որ իր անկաշառ հայրե-
նասիրությամբ, ժողովրդանվեր գործունեու-
թյամբ, իր առաքինազարդ և անբասիր կեն-
ցաղով, հեզանամբույր և բարեմույն բնավո-
րությամբ, Հայաստանյայց Առաքելական
Եկեղեցու և մեր հոգեկան, մշակութային ար-
ժեքների նկատմամբ իր ունեցած անսահման
սիրով և նվիրվածությամբ, իր համալսարա-
նական բարձրագույն կրթությամբ, մեր
պատմական մեծ հոգևորականների տեսիլ-
քով և կերպարով, մեր ինքնատիպ եկեղեցա-
կաններից մեկն է, որ այնքան կարճ ժամա-

նակաշրջանում նվաճել է ողջ հայության
սերն ու վստահությունը:

Վազգեն Ա. Կաթողիկոսը Ս. Լուսավորչի
պատմական Արոտի վրա մի հոր ու խոս-
տումնալից էջ է բաց անելու մեր ազգային-
եկեղեցական հորագույն տարեգրության մեջ:
Նա պիտի կարողանա վառ պահել հայ հա-
վատի, հայրենասիրության բոցավառ հուրը
հայ հոգիներում և հավատավոր հայ սրտե-
րում, հա պիտի կարողանա բարձր պա-
հել Ամենայն Հայոց Հայրապետության վե-
հիրավ գերազանությունը, Ս. էջմիածնի դա-
րավոր ու պատմական Արոտի հայրապետա-
կան հեղինակությունն ու հմայքը, ու պիտի
կարենա սերտացնել Մայր Արոտի և մեր
նվիրապետական մյուս Արոտների, մեր քե-
մերի սրտազին փոխհարաբերությունը, ազ-
գային-եկեղեցական անփակտելի միասնու-
թյունը, անաղարտ պահել մեր եկեղեցու
առաքելահաստատ կարգն ու կանոնը, մեր
դարավոր ազգային-եկեղեցական ավանդու-
թյունները, մեր եկեղեցու ինքնուրույնությու-
նը, ազգային նկարագիրը, ուղղափառությու-
նը, ժողովրդական սկզբունքները, ժողովրդ-
դանվեր և հայրենաճանվեր ոգին:

Ազգային-եկեղեցական ժողովում արտա-
սանած իր առաջին ողջույնի խոսքերում հոր-
քերի Հայրապետն ասաց. «Հայրական սի-
րո զգացումներով զեղուն՝ ջերմազին կոչ
կաղենք մեր բովանդակ եկեղեցիին, Տանն
Կիլիկիո Կաթողիկոսության, Մբոս Երուսա-
ղեմի և Կոստանդնուպոլսո մեր Պատրիար-
քությանց Արոտներուն, մեր քեմակալ գերա-
շնորհ առաջնորդներուն, մեր եկեղեցվո բո-
լոր սպասավորներուն և մեր ամբողջ հավա-
տացյալ ժողովուրդին ու կմաղքենք, որ ա-
նոնք անխախտ մնան իրենց նախնայց հա-
վատին և ավանդություններուն վրա, ան-
խախտ մնան իրենց եկեղեցասիրության և
հայրենասիրության զգացումներուն մեջ և
միշտ բարձր պահեն հայ ժողովուրդի, Հայ
եկեղեցվո միասնականության նվիրական
դրոշը:

«Մեր ուժը, մեր փրկությունը մեր միու-
թյան մեջ է: Այս վեմին վրա կանգնած ենք
Մենք և պիտի շարժինք: Եվ պիտի հաջողինք
Մեր եկեղեցանվեր ու հայրենաճանվեր գործին
մեջ, «զի Աստուած ընդ մեզ է»: Մեր այս հա-
վատի և ուխտի խոսքը ընդունեցեք որպես

նվիրական ողջուն հայրապետական և տա-
րի՛հ Ձեզ հետ մեր բոլոր եկեղեցականներուն,
մեր բոլոր հավատացյալներուն. «Ողջուն տա-
ջի՛հ միմեանց ի համբոյր սրբութեան»: Թող
հավետ անասան մեան և օրհնելի բլլան
Հայաստանայց Առաքելական Ս. եկեղեցին,
Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և համայն ժողո-
վուրդն հայոց»:

Ազգային-եկեղեցական ժողովը իր շնորհա-
կալությունը հայտնեց Սովետական Միության
Մինիստրների Սովետին՝ Ազգային-եկեղեցա-
կան ժողովի գումարման առեւորդամբ տըր-
ված դյուրությունների համար: Ժողովը իր
ջերմագին շնորհակալությունն ուղղեց նաև
Հայրենի կառավարությանը, որ այնքան մեծ
հոգատարությամբ կատարել է Մայր Տաճարի
վերանորոգությունը:

Ազգային-եկեղեցական ժողովը, օրակա-
ր մյուս հարցերի առթիվ, ընդունեց համա-
պատասխան գործնական որոշումներ, և
գտնելով նրանց իրագործումն անհետաձգելի,
ընդունեց մի շարք բանաձևեր, որոնք պիտի
ապահովեն վերոհիշյալ որոշումների կամ
խնդիրների կենսագործումը:

Ազգային-եկեղեցական ժողովը, բացառիկ
խանդավառ պայմաններում, խոստացավ իր
նյութական ու բարոյական օժանդակու-
թյունը նորընտիր Հայրապետին, նրա ծրա-
գրերը և սրտի նվիրական բաղձանքներն

իրականացնելու համար՝ ի փառս Հայաս-
տանայց Առաքելական եկեղեցու, ընդու-
նելով Մայր Աթոռին նյութական օգնության
անհրաժեշտությունը:

Ազգային-եկեղեցական Սահմանադրության
ֆենարկումը բողոքեց Գերագույն Հոգևոր
Խորհրդին, բստ ամենայնի այն ֆենարկելու,
ստուգելու և գործնականապես ծանոթանալու
իմաստով, և ապա բերվելու Ազգային-եկե-
ղեցական ժողովին, որը, բստ նորընտիր Հայ-
րապետի ցանկության, պետք է գումարվի
4—5 տարին մեկ անգամ:

Ազգային-եկեղեցական ժողովի պատգա-
մավորների անկաշառ հայրենասիրությունից
ու եկեղեցասիրությունից էր կախված Ազ-
գային-եկեղեցական մեծ ժողովի աշխա-
տանքների արդյունավետությունն ու բեղմ-
նավորությունը, իսկ ազգընտիր պատգամա-
վորները արեցին իրենց կարելին՝ ժողովի
բարեհաջող ավարտման համար:

Զորհուրդ նիստում ազգային-եկեղեցական
ժողովը ավարտեց իր աշխատանքները:

Թող Տերն անասան պանե Հայաստան-
այց Առաքելական Սուրբ եկեղեցին և հայ
ժողովուրդը:

Մարքեմ Ամենակալին՝ շնորհել ազգըն-
տիր Հայրապետին երկար կյանք՝ ի բարօրու-
թյուն Հայաստանայց Առաքելական եկեղե-
ցու և հայ ժողովրդի:

